ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Սեբաստիայի փ. հ. 32, (+374 11) 518-585,էլ. փոստ՝ malatia_sebastia@yerevan.am

«ԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԳԵՎՈՐԳ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ՀՀ,Գեղարքունիքի մարզ,
Ծովակ 1612, փ.3, տ.16)

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
(Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին)

Երևանի քաղաքապետարանը՝ ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի Ժ/պ Գ. Մուրադյանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ » ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Գևորգ Մարկոսյանի (այսուհետ՝ Կապալառու), 28.ապրիլ.2023 թվականին կնքել են «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/61-1» ծածկագրով «Կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր», որի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, նախատեսված ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վարձատրել դրա համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն *չկատարելը* կամ *անպատշաճ* (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 3 կետի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

Կապալային աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը սահմանող թիվ 2 հավելվածը սահմանում է, որ «90 օրացուցային օրում աշխատանքներն իրականացնել ծավալաթերթ-նախահաշվով ներկայացված ամբողջ ծավալի չափով»:

Տեղեկացնում ենք, որ «ԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունը չի կատարել, այն է՝ խախտել է պայմանագրով նախատեսված ժամկետներում կատարել N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքները, մինչդեռ պայմանագրի 3.4.1 կետի համաձայն Կապալառուն պարտավոր է աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և **ժամկետներում**, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ » ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով Երևանի քաղաքապետարանը մասնակի միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը,

եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Միաժամանակ հայտնում ենք, որ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈՄԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Կատ. Մ. Հարությունյան
Հեռ. 011518590